ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 մարտի 2023 թվական N 198 - Ա

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի N 442-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Արցախի Հանրապետությունում սպանդանոցների, անասնաբուծական մթերքների և հումքի վերամշակման արտադրամասերի, անասնաշենքերի, ձկնաբուծարանների (խեցգետնաբուծարանների), սնկանոցների կառուցման, վերակառուցման ու վերանորոգման, անասնաշենքերի ձեռք բերման արժեքի մասնակի սուբսիդավորման ծրագիրը հաստատելու և Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 16-ի N 332-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 442-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում և 1-ին կետում «, անասնաշենքերի ձեռք բերման» բառերը հանել.

2) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2023 թվականի _____-ի
N _____ -Ա որոշման

«Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի ապրիլի 22-ի
N 442-Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ, ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՄՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԵՐԻ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ, ՁԿՆԱԲՈՒԾԱՐԱՆՆԵՐԻ (ԽԵՑԳԵՏՆԱԲՈՒԾԱՐԱՆՆԵՐԻ), ՍՆԿԱՆՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ծրագով կանոնակարգվում են Արցախի Հանրապետության տարածքում սպանդանոցների, անասնաբուծական մթերքների և հումքի վերամշակման արտադրամասերի, անասնաշենքերի, ձկնաբուծարանների (խեցգետնաբուծարանների), սնկանոցների կառուցման, վերակառուցման ու վերանորոգման արժեքի մասնակի սուբսիդավորման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն ծրագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ***հայտատու՝*** սպանդանոցների, անասնաբուծական մթերքների և հումքի վերամշակման արտադրամասերի, անասնաշենքերի, ձկնաբուծարանների (խեցգետնաբուծարանների), սնկանոցների կառուցման, վերակառուցման ու վերանորոգման նպատակով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) դիմած ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

2) ***սպանդանոց՝*** համապատասխան սարքավորումներով կահավորված շինություն (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի

5-ի N 615-Ն որոշման 24–րդ կետի պահանջներին համապատասխան), որտեղ գյուղատնտեսական կենդանիներին ենթարկում են սպանդի՝ որպես արդյունք՝ նրանցից ստանալով միս և սպառողական այլ մթերքներ (կաշի, բուրդ, եղջյուրներ, սմբակներ և այլն): Սպանդանոցներում սպանդի ենթարկվում են գյուղատնտեսական կենդանիների հետևյալ հիմնական խմբերը՝ խոշոր և մանր եղջերավորներ, խոզեր և ձիեր.

3) ***անասնաբուծական մթերքների և հումքի վերամշակման արտադրամաս՝*** համապատասխան բաժանմունքներով և կահավորված շինություն, որտեղ իրականացվում է անասնաբուծական մթերքների, հումքի վերամշակում.

4) ***անասնաշենք՝*** ոչ պակաս քան 100 մ^2 մակերեսով շենք, որտեղ ժամանակավորապես կամ մշտապես պահվում են կենդանիներ, բացառությամբ անասնաբուժական կլինիկաների և կենդանիների շտապօգնության կազմակերպությունների.

5) ***ձկնաբուծարան (խեցգետնաբուծարան)՝*** տնտեսություն նախատեսված ձկների և խեցգետինների արհեստական բուծման և աճեցման համար.

6) ***վերամշակում՝*** տեխնոլոգիական գործընթաց, որի արդյունքում զգալիորեն փոփոխվում է անասնաբուծական մթերքի և հումքի ֆիզիկական և (կամ) քիմիական կազմը, ներառյալ վերամշակման արդյունքում ստացվող կողմնակի արտադրատեսակները.

7) ***կառուցում՝*** շենքի կամ շինության կանգնեցում, կառուցում.

8) ***վերակառուցում՝*** շինարարական աշխատանքների և միջոցառումների համալիր, ուղղված շենքի կամ կառուցվածքի, դրա առանձին մասերի նոր գործառնական նշանակությամբ օգտագործմանը և/կամ հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխմանը, շենքի կամ կառուցվածքի հուսալիության ապահովմանն ու արդիականացմանը.

9) ***վերանորոգում՝***

ա. հիմնական նորոգում՝ վերակառուցման սահմանման տակ չընկնող շենքի կամ կառուցվածքի հիմնական ֆիզիկատեխնիկական, գործառնական նշանակության վերականգմանն ուղղված միջոցառումների համալիր, անհրաժեշտության դեպքում առանձին կոնստրուկտիվ տարրերի և ինժեներական հաղորդակցուղիների ու սարքավորումների փոխարինումով, ինչպես նաև շահագործողական ցուցանիշների բարելավումով.

բ. ընթացիկ նորոգում՝ վերակառուցման սահմանման տակ չընկնող շինարարական աշխատանքների և միջոցառումների համալիր՝ ուղղված շենքի կամ կառուցվածքի, դրա առանձին մասերի, ինժեներեկան հաղորդակցուղիների ու սարքավորումների աշխատունակության և շահագործողական ցուցանիշների վերականգնմանը.

10) **սնկանոց՝** սունկ աճեցնելու տեղ:

2. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Արցախի Հանրապետության տարածքում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից սպանդանոցների, անասնաբուծական մթերքների և հումքի վերամշակման արտադրամասերի, անասնաշենքերի, ձկնաբուծարանների (խեցգետնաբուծարանների), սնկանոցների կառուցման, վերակառուցման ու վերանորոգման համար սահմանվում է սուբսիդավորում՝ իրականացված աշխատանքների արժեքի 60 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան՝

1) սպանդանոցների, անասնաբուծական մթերքների, հումքի վերամշակման արտադրամասերի, անասնաշենքերի, ձկնաբուծարանների (խեցգետնաբուծարանների), սնկանոցների կառուցում ՝ 40 000 000 ՀՀ դրամ.

2) սպանդանոցների, անասնաբուծական մթերքների, հումքի վերամշակման արտադրամասերի, անասնաշենքերի, ձկնաբուծարանների (խեցգետնաբուծարանների), սնկանոցների վերակառուցում՝ 20 000 000 ՀՀ դրամ.

3) սպանդանոցների, անասնաբուծական մթերքների, հումքի վերամշակման արտադրամասերի, անասնաշենքերի, ձկնաբուծարանների (խեցգետնաբուծարանների), սնկանոցների վերանորոգում՝ 15 000 000 ՀՀ դրամ:

4. Ծրագրի շրջանակում սահմանված 60 տոկոսի չափով սուբսիդավորումը իրականացվում է աշխատանքների ավարտից հետո, իսկ մնացած 40 տոկոսը հայտատուն կատարում է սեփական միջոցների հաշվին:

5. Արցախի Հանրապետության տարածքում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից սպանդանոցների, անասնաբուծական մթերքների և հումքի վերամշակման արտադրամասերի, անասնաշենքերի, ձկնաբուծարանների (խեցգետնաբուծարանների), սնկանոցների կառուցման, վերակառուցման ու վերանորոգման ծրագրի շահառու հանդիսանալու համար հայտատուները նախարարություն են ներկայացնում դիմում-հայտ՝ համաձայն Ձևի: Դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետ է համարվում մինչև տվյալ տարվա հուլիսի 1-ը:

6. Նախարարություն ներկայացված դիմում-հայտերի ուսումնասիրման նպատակով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով:

7. Յուրաքանչյուր դիմում-հայտ ներկայացնելուց հետո՝ հանձնաժողովը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, ստուգում հայտատուների կողմից ներկայացված տվյալները և տալիս եզրակացություն: Դրական եզրակացություն ստացած հայտատուները պարտավորվում են 35 (երեսունհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերը:

8. Նախարարությունը փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա ընթացքավորում է գործընթացը:

9. Շինարարությունը իրականացվում է հայտատուի կողմից ընտրված լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ կապալառու) միջոցով: Հայտատուն կարող է անձամբ իրականացնել վերանորոգման աշխատանքներ, որի կատարման արժեքը համաձայն փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում է առավելագույնը 5 000 000 ՀՀ դրամ:

10. Նախարարությունը սպանդանոցների, անասնաբուժական մթերքների և հումքի վերամշակման արտադրամասերի, անասնաշենքերի, ձկնաբուժարանների (խեցգետնաբուժարանների), սնկանոցների կառուցման, վերակառուցման ու վերանորոգման նպատակով նախարարություն դիմած հայտատուի և կապալառուի հետ կնքում է ֆինանսական միջոցների անհատույց տրամադրման համապատասխան պայմանագիր:

11. Նախարարությունը հիմք ընդունելով սույն ծրագրի 10-րդ կետը՝ կազմակերպում է մասնագիտական որակավորում ունեցող անձի կողմից պայմանագրային հիմունքներով օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցումը՝ Արցախի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցներով:

12. Սպանդանոցների, անասնաբուժական մթերքների և հումքի վերամշակման արտադրամասերի, անասնաշենքերի, ձկնաբուժարանների (խեցգետնաբուժարանների), սնկանոցների կառուցման, վերակառուցման ու վերանորոգման աշխատանքների ավարտից

հետո հայտատուն, կապալառուն և տեխհսկիչը համատեղ նախարարություն են ներկայացնում՝

ա. գրություն շինարարական աշխատանքների ավարտման մասին,

բ. կատարողական ակտեր,

գ. թաքնված աշխատանքների և լուսանկարների էլեկտրոնային տարբերակը՝ սկավառակի վրա:

13. Սպանդանոցների, անասնաբուծական մթերքների և հումքի վերամշակման արտադրամասերի, անասնաշենքերի, ձկնաբուծարանների (խեցգետնաբուծարանների), սնկանոցների կառուցման, վերակառուցման ու վերանորոգման աշխատանքների ավարտից հետո հանձնաժողովը ստուգում է իրականացված աշխատանքների համապատասխանությունը անասնաբուժասանիտարական, շինարարական ու բնապահպանական պահանջներին: Դրական եզրակացության դեպքում նախարարությունը սուբսիդավորում է արժեքի համապատասխան մասը:

14. Արցախի Հանրապետության տարածքում սպանդանոցային գործունեությամբ, անասնաբուծական մթերքների և հումքի վերամշակմամբ չզբաղվելու և անասնաշենքերը, ձկնաբուծարանները (խեցգետնաբուծարանները) և սնկանոցները յոթ տարի նպատակային չօգտագործելու դեպքում՝ սույն կետով սահմանված ժամկետի չօգտագործված մասին համաչափ տրամադրված արժեքի սուբսիդավորված մասը ենթակա է վերադարձման Արցախի Հանրապետության պետական բյուջե՝ խախտումը հայտնաբերելուց հետո երեք ամսվա ընթացքում, իսկ տվյալ հայտատուն ծրագրի չիրականացված ժամկետին համապատասխան զրկվում է նախարարության կողմից իրականացվող որևէ պետական աջակցության ծրագրից:

15. Սպանդանոցների, անասնաբուծական մթերքների և հումքի վերամշակման արտադրամասերի գործունեության վերաբերյալ հայտատուները պարտավոր են յուրաքանչյուր ամիս՝ մինչև տվյալ ամսվանը հաջորդող ամսվա տասը, նախարարություն ներկայացնել հաշվետվություն՝ նշելով արտադրության ծավալների մասին:

16. Նախարարությունը համակարգում և վերահսկողություն է իրականացնում գործընթացի նկատմամբ:

3. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

17. Ծրագրի շրջանակում մշտադիտարկումն իրականացվում է նախարարության միջոցով:

18. Նախարարությունում ձևավորվում է վիճակագրական տվյալների բազա:

19. Խախտումների և կեղծ տեղեկատվության ի հայտ գալու դեպքում՝ հայտատուն օրենքով սահմանված կարգով կենթարկվի պատասխանատվության:

4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

20. Սույն ծրագրի շրջանակում միջոցառումների իրականացման հիմնական նպատակը սպանդանոցների, անասնաբուծական մթերքների և հումքի վերամշակման արտադրամասերի, անասնաշենքերի, ձկնաբուծարանների (խեցգետնաբուծարանների), սնկանոցների կառուցման, վերակառուցման ու վերանորոգման արժեքի մասնակի սուբսիդավորումն է, ինչը հնարավորություն կընձեռի արտադրել որակյալ և անվտանգ մսամթերք, անասնաբուծությունը դարձնելով ինտենսիվ և մրցունակ, ավելացնել անասնագլխաքանակը:

21. Արցախի Հանրապետությունում սպանդանոցների, անասնաբուծական մթերքների և հումքի վերամշակման արտադրամասերի, անասնաշենքերի, ձկնաբուծարանների (խեցգետնաբուծարանների), սնկանոցների կառուցման, վերակառուցման ու վերանորոգման արժեքի մասնակի սուբսիդավորման գործընթացի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) մսամթերքի անվտանգության մակարդակի բարձրացում.

2) մսամթերքի արտադրության ծավալների հստակեցում.

3) անասնաբուծության վարման ժամանակակից տեխնոլոգիաների ներդնում.

4) գյուղական վայրերում անասնաբուծության զարգացման և վերամշակման նոր ձեռնարկությունների ստեղծման համար նպաստավոր պայմանների ապահովում.

5) անասնաբուծական մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացում.

6) անասնագլխաքանակի ավելացում.

7) տեղական արտադրության խթանում:

Ձև
Արցախի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարություն

Դ Ի Մ ՈՒ Մ - Հ Ա Յ Տ

Դիմող _____

(ֆիզիկական կամ իրավաբանական անձ)

_____

Բնակության վայրը (գտնվելու վայրը), հեռախոսահամարը _____

_____

Անձնագրի սերիան և հանրային ծառայությունների համարանիշը

_____

Գործունեության իրականացման վայրը _____

_____

Դիմում եմ Ձեզ «Սպանդանոցների, անասնաբուծական մթերքների և հումքի վերամշակման արտադրամասերի, անասնաշենքերի, ձկնաբուծարանների (խեցգետնաբուծարանների), սնկանոցների կառուցման, վերակառուցման ու վերանորոգման արժեքի մասնակի սուբսիդավորման» ծրագրում ընդգրկվելու համար:

Դիմում-հայտին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1. Ֆիզիկական անձի անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշի պատճենը,
2. Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) պետական գրանցման (հաշվառման) վկայականի պատճենը,
3. Գործունեության իրականացման վայրի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում) կամ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանք,
4. Որոշում կառուցման թույլտվության մասին:
5. _____
6. _____

Ներկայացված փաստաթղթերը ենթակա չեն վերադարձման:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

_____

(ստորագրությունը, անունը, ազգանունը (ֆիզիկական կամ իրավաբանական անձի անվանումը)

«___» _____ 20 թ.

Կ.Տ. »:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ***Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***